# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 փետրվարի 2025 թվական, N 14-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 11-րդ պարբերության և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2024 թվականի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՋԱԽԱՐՈՎ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., փետրվարի 13,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում
Իրականացված բնապահպանական ծրագրի մասին

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) անվանումը՝
*Ալավերդի համայնքի 2024թ. շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագիր:*

## Ա) ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Ծրագրի իրավական հիմքերը** (նշել համայնքի ավագանու որոշման և ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ամսաթիվը և համարը)՝
*ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2024թ հոկտեմբերի 11-ի N 114-Ա որոշում*
*2023 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին օրենք:*

1. **սկիզբը և ավարտը՝** *15.03.2024թ - 31.12.2024թ:*
2. **Ծրագրի նախագծային արժեքը՝** *29001.0 հազ. դրամ, որից 29001.0 հազ. դրամ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին:*
3. **Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը՝** (Ծրագրով անդրադարձ կատարված բնապահպանության և առողջապահության ոլորտներում)

*Ալավերդին բազմաբնակավայր համայնք է, որի կազմում ընդգրկված են 3 քաղաքային և 25 գյուղական բնակավայրեր: Ալավերդի համայնքի խոշոր բնակավայրերը ձևավորվել են հանքարդյունաբերության շուրջ: Ալավերդի քաղաքում պղնձաձուլական գործարանը աշխատել է ավելի քան 250 տարի: Թեև այն վերջին տարիներին դադարեցրել է գործունեությունը, սակայն մինչ օրս առկա է գործարանի արտանետումների բացասական (անխուսափելի) ազդեցությունը շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա:*
*Այսօր էլ համայնքում գործում են հանքարդյունաբերական խոշոր ձեռնարկություններ՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն, որն իրականացնում է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքաքարի արդյունահանում ու վերամշակում, և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, որը շահագործում է Շամլուղի պղնձի հանքավայրը և զբաղվում հանքանյութի մշակմամբ: Այս ձեռնարկությունների շրջակա միջավայրի վրա ազդեցությունն արտահայտվում է մի քանի ուղղություններով, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական ջրերի արտահոսքը, մարդու առողջության համար վտանգավոր գազերի ու փոշու արտանետումներն օդային ավազան և վտանգավոր նյութերի արտահոսքը:*
*Հանքավայրերի երկարամյա շահագործումը, խոշոր պոչամբարների, մկնդեղի թափոնների գերեզմանոցի և կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի առկայությունը, խոշոր բեռնատարների երթևեկությամբ ծանրաբեռնված համայնքի միջով անցնող միջպետական ավտոճանապարհը, տարածքի անտառների ժամանակին իրականացված հատումները համայնքի բնակչության առողջության և բնության վրա ունեն էական բացասական ազդեցություն:*

4. **Ծրագրի նպատակը և Ծրագրով հաստատված ուղղակի և վերջնական ակնկալվող արդյունքները՝**

*Ծրագրի նպատակներն են՝*
- *Առողջ ապրելակերպի խթանում:*
- *Մթնոլորտային օդի մաքրության պահպանություն:*

*Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝*
- *Առողջ ապրելակերպի համար ստեղծել պայմաններ:*
- *Համայնքում սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար ապահովել ֆիզիկական դաստիարակության ու ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու մատչելիություն:*
- *Ստեղծել բարենպաստ համայնքային միջավայր:*
- *Նպաստավոր և անվտանգ պայմաններ հանգստի և ժամանցի համար:*
- *Մթնոլորտային օդում փոշու և մեքենաների արտանետումների արդյունքում օդի աղտոտվածության խտության նվազում:*

5. **Ծրագրի շահառուները՝** (նկարագրել շահառուների խումբը՝ ըստ տարիքային, մասնագիտական, կարիքավորության կամ այլ գործոնների և նախատեսվող թիվը)

*Ծրագրի ուղղակի շահառուները Ալավերդի և Թեղուտ բնակավայրի բնակիչներն են՝ թվով 20407 մարդ, ովքեր ֆիզիկական վարժություններով զբաղվելու, առողջ ապրելակերպ վարելու, մաքուր մթնոլորտային օդում լիարժեք հանգիստը կազմակերպելու հնարավորություն կունենան:*

6. **Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները՝** (նշել Ծրագրի, ինչպես նաև ծրագրում ընդգրկված միջոցառումների ընտրման հիմնական պատճառները)

*Համայնքի ազդակիր Թեղուտ բնակավայրում չկան հանգստի գոտիներ և մարզահրապարակներ, իսկ Ալավերդի բնակավայրում դրանք սակավաթիվ են, ինչով պայմանավորված բնակիչների սպորտով զբաղվելու և ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորություն և մատչելիություն չի ապահովվում: Միևնույն ժամանակ բնակավայրերում կան տարածքներ, որոնց անբարենկարգ վիճակը բացասական ազդեցություն է ունենում նաև մթնոլորտային օդի մաքրության և պահպանման վրա:*

*Վերոնշյալ վիճակը շտկելու, մթնոլորտային օդը մաքուր պահելու, բնակիչների առողջության պահպանման, ամրապնդման, առողջ ապրելակերպի խթանման նպատակով Ալավերդի համայնքապետարանում 20.04.2023թ կայացած հանրային քննարկումների արդյունքների և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 6-րդ և 11-րդ ենթակետերի (մթնոլորտային օդի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ, բնակավայրերի կանաչ գոտիների պահպանման, վերականգնման, բարելավման միջոցառումներ, առողջ ապրելակերպի խթանում, վարքագծային գործոնների ձևավորում, առողջ ապրելակերպի ձևավորմանն ու խթանմանն ուղղված միջոցառումներ) համաձայն, նպատակահարմար էր բնակավայրերի այդ տարածքներում կառուցել մարզահրապարակ/հանգստի գոտիներ:*

## Բ) ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. **Ծրագրի իրականացման փաստացի արժեքը՝** *31117,674 հազ. դրամ, որից 29001,00 հազ. դրամ 22 2024 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին և 2116,674 հազ. դրամ համայնքային բյուջեի միջոցների հաշվին:*

2. **Ծրագրի փաստացի շահառուները՝** (նշել փաստացի շահառուների խումբը և թիվը ամբողջ ծրագրի ընթացքում)

*Ծրագրի ուղղակի շահառուները Ալավերդի և Թեղուտ բնակավայրի բնակիչներն են՝ թվով 20407 մարդ, ովքեր ֆիզիկական վարժություններով զբաղվելու, առողջ ապրելակերպ վարելու, մաքուր մթնոլորտային օդում լիարժեք հանգիստը կազմակերպելու հնարավորություն ունեն:*

3. **Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները՝** (նշել փաստացի իրականացված միջոցառումները՝ յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքների, նկարագրությամբ)

*Ծրագրի շրջանակում իրականացվել է Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում միջոցառումը: Մասնավորապես՝ կազմվել են Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնց հիման վրա կազմակերպված գնման գործընթացի արդյունքում ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար կնքվել են կապալի, տեխնիկական և հեղինակային հսկողության պայմանագրեր: Կնքված պայմանագրերի համաձայն կատարվել են աշխատանքները, կազմվել են հանձնման-ընդունման արձանագրություններ, որոնց հիման վրա կատարվել են վճարումներ:*

4. **Ծրագրի իրականացնողները և աջակցողները՝** (թվարկել Ծրագրի յուրաքանչյուր միջոցառման մասով իրականացման մասնակիցների (ՏԻՄ, մասնավոր ընկերություն, ոչ առևտրային կազմակերպություն, միջազգային գործընկեր կամ հասարակական կազմակերպություն) անվանումները՝ *Ալավերդու համայնքապետարան:*

5. **Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը՝**

- *Առողջ ապրելակերպի համար ստեղծվել են պայմաններ:*

- *Համայնքում սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար ապահովվել է ֆիզիկական դաստիարակության ու ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու մատչելիություն:*
- *Ստեղծվել է բարեկարգ համայնքային միջավայր:*
- *Նպաստավոր և անվտանգ պայմաններ հանգստի և ժամանցի համար:*

7. **Հաշվետվության հրապարակումը՝** (նշել կայքէջում տեղադրման ամսաթիվը, ՁԼՄ-ներում հրապարակման դեպքում՝ նաև տալ հղումները) *18.02.2025թ:*

| | | |
|---|---|---|
| Ալավերդի համայնքի ղեկավար | _____ | Դավիթ Ղումաշյան |
| *(զբաղեցրած պաշտոնը)* | *(ստորագրությունը)* | *(անուն, ազգանունը)* |

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում իրականացված բնապահպանական ծրագրի վերաբերյալ՝

*ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՐԱԳԻՐ*

| Հ/հ | Ծրագրում ընդգրկված միջոցառման տեսակը և անվանումը | | Ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նկարագրությունը | | Միջոցառման սկիզբը (ամսաթիվը) | Միջոցառման ավարտը (ամսաթիվը) | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ընդհանուր արժեքը | | | որից՝ պետական բյուջեի (սուբվենցիայի) հաշվին | | | |
| | բնապահպանական | առողջապահական | | | | | նախագծային | փոփոխված | փաստացի | նախագծային | փոփոխված | փաստացի | մնացորդը |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 1 | - | Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում | Ալավերդի համայնքի Ալավերդի և Թեղուտ բնակավայրերում մարզահրապարակ/հանգստի գոտիների կառուցում | - | 15.03.2024թ | 31.12.2024թ | 29001 | 29001 | 29001 | 29001 | 29001 | 29001 | 0 |

| համայնքի բյուջեի հաշվին (առկայության դեպքում) | | | այլ միջոցների հաշվին (առկայության դեպքում) | | | Միջոցառման իրականացնողը | | Ոչ ֆինանսական ցուցանիշներ՝՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ցուցանիշ 1. | | ցուցանիշ 2. | |
| նախա գծային | փոփո խված | փաստ ացի | նախա գծային | փոփո խված | փաստ ացի | անվանում | կոնտա-կտային տվյալներ՝ հեռա-խոսա-համար, էլ. փոստային հասցե | ծրագիր | փաստ | ծրագիր | փաստ |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 0 | 0 | 2116,7 | 0 | 0 | 0 | Ալավերդու համայնքապետարան | Սիմոնյան Կարինե 025324100 programstourismalaverdi@gmail.com | Կառուցվել է 2 մարզահրապարակ/հանգստի գոտի | Կառուցվել է 2 մարզահրապարակ/հանգստի գոտի | Բնակիչները ֆիզիկական վարժություններով զբաղվելու և առողջ ապրելակերպ վարելու հնարավորություն ունեն | Բնակիչները ֆիզիկական վարժություններով զբաղվելու և առողջ ապրելակերպ վարելու հնարավորություն ունեն |

| ցուցանիշ 3. | | ցուցանիշ 4. | | ցուցանիշ 5. | | Անմիջական շահառուների՝ | | | Նախագծային և փաստացի իրականացված միջոցառումների, դրանց արժեքի և ոչ ֆինանսական ցուցանիշների միջև շեղումների հիմնական պատճառների նկարագրություն | Հաշվետվության հրապարակման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծրագիր | փաստ | ծրագիր | փաստ | ծրագիր | փաստ | նկարագրված խումբը | նախատեսվող թիվը | փաստացի թիվը | | |
| 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 |
| - | - | - | - | - | - | Ալավերդի և Թեղուտ բնակավայրերի բնակիչներն են, ովքեր ֆիզիկական վարժություններով զբաղվելու, առողջ ապրելակերպ վարելու, մաքուր մթնոլորտային օդում լիարժեք հանգիստը կազմակերպելու հնարավորություն կունենան: | 20407 | 20407 | Ծրագրով նախատեսված միջոցառման փաստացի արժեքը գերազանցել է նախատեսված արժեքը, որի տարբերությունը ֆինանսավորվել է Ալավերդու համայնքային բյուջեից: | 18.02.2025թ |